



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԵՆ ՏՈՆԸ

Մեն տարի նոյեմբերի 29-ին, հայ ժողովուրդը, արժանավայել հանդիսուրյամբ, պազային արդար հպատակության և բերկրանքի ժաղց զգացմունքներով, ճշում է վերածրնված Մայր Հայրենիքի տոնը:

Հայ ժողովուրդի ազատագրական պայքարի պատմության փառավոր ու հերոսական րվականներից մեկն է նոյեմբերի 29-ը, երբ մահվան եզրերին հասած մեր ժողովուրդը, վիրավոր սրբով ու արյունաբամ, բայց ապրելու և տեսնու արի ու հերոսական վեռականությամբ տոգորված, 1920 րվականի նոյեմբերին, ոտքի կանգնեց, և ոսու մեծ ու ազնիվ ժողովուրդի եղբայրական օգնությամբ, մի անգամ ընդմիջու խորտակեց սուրկության շղթաները և արևի տակ՝ իրեն և գալիք բռոր հայ սերունդների համար և անձնեց ազատ պարեկու իրԱՎՈՒԹ, ՀԱՅՐԵՆԻՔ և ՊԵՏԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ:

Իր հակատագրին և իր Մայր Հայրենիքին տեր դարձած հայ ժողովուրդը, ամեն տարի, համախմբված իր հայրենի բարեխնամ կառավարության շուրջ, եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքում, տնտեսական և մշակուրային փայլում նվաճումներով է դիմավորել միշտ իր ազատագրության և պազային վերածնության տարեղարձը:

Նոյեմբերի 29-ը ոչ միայն ՓրկութՅունի բերեց մեր ժողովուրդին երա պատմության ամենամոռյալ և հուսահատական շրջանին, այլ դարձավ հուսալից Սկիզբը ԱԶԴԱՅԻՆ ՄՔԱՆՉԵԼԻ ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ:

Քառասունմեկ տարի է տնօքել պատմական այդ բարեկանությացից:

Քառասունմեկ տարին պատմական մի մեծ ժամանակաշրջան չէ որևէ ժողովրդի կյանքի մեջ և պատմության ընթացքում, բայց իրոք պատմական են մեր ժողովուրդի նվաճումները Հայրենի Հողի վրա:

Քառասունմեկ տարիների սիրազործ աշխատանքում առնականացավ, գեղեցկացավ մեր Հայրենիքը և դարձավ բարձր, զարգացած արդյունաբերության, զյուղատնտեսության, գիտության և մշակույթի Հայրենիք:

Առաջ բափով զարգանում է մեր երկիրը: Անցյալ ավերակների վրա բարձրացել են և բարձրանում են վարդագույն հարտարապետական կառույցներ, լուսաշող բաղաներ, շեն ու պայծառ ավանենք, ուր ապրում է և ստեղծագործում և իր ապագային պայծառ աշերեն հայում մի շարքաշ ու կենտրոնական սուրախի հայ սերունդ:

Անցնալ յուրաքանչյուր օր երջանկության, բարգավանման նոր զարունենք է բերում մեր Հայրենիքին և ժողովրդին:

Հայրենիքի ձեռք բերած նվաճումները հապատության զգացմունքներով են լցոնում եղմարտապիս հայ ամեն մարդու սիրտը:

Բայց ավելի պայծառ, ավելի լուսավոր և հուսալից է իր Հայրենի Հողի վրա հայ ժողովուրդի ապագան:

Բայց է միայն այստեղ արձանագրել այն ուրախայի փաստը, որ Հայատանի արդյունաբերության արտադրանքի 60 տեսակները արտահանվում են այսօր ավելի քան 37 արտասահմանյան երկրներ:

Մեր Հայրենիքը, 41 տարիների ընթացքում, դարձել է համատարած գրագիտու-

րյան, առաջավոր գիտության, արվեստի և գրականության երկիր, ծածկվել է համբարկական դպրոցների, բարձրագույն և միջնակարգ ուսումնական, մշակութային հաստատությունների, գիտահետազոտական հիմնարկների խիստ ցանցով, դարձել ԱՌԻՅՍԻ ՀԱՅՐԵՆԻՔ, ՀՈՒՅՅՈՒ ՀԱՅՐԵՆԻՔ:

Այսօր Հայաստանի մասսայական դպրոցներում սովորողների թիվը 340 000-ից ավելի է: Ուսապուրիկայի դպրոցների թիվը գերազանցում է նախասովետական Հայաստանի բոլոր ուսուցիչների թվին:

Անցնող տարում զգալի աշխատանք է կատարվել ընդհանուր, պարտադիր ուրծամյա կրթության անցնելու ուղղությամբ: Ավելի քան 400 դպրոցներ արդեն վերակազմվել են ուրծամյա դպրոցների:

Հայաստանում կա 19 գիշերօրիկ դպրոց, որ սովորում է ավելի քան 6 000 երեխա:

Աննախրենքաց վերելիք է ապրում գիտական միաբն Մայր Հայրենիքում, որի խանձարուրն է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան: Մեր հայրենիք գիտեական ները, ոչ միայն հանաշամ են գտել մեր երկրում, այլ նաև նրա սահմաններից դուրս: Ամբողջ աշխարհին հայտնի են հայ գիտեականների հաջողությունները գիտության և տեխնիկայի բնագավառում: Հայաստանում տարեցտարի ուժեղ քափ է ստանում գիտահետազոտական աշխատանքը: Ներկայումս Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի և գերատեսչությունների սիստեմում կան 79 գիտահետազոտական հիմնարկներ, որոնցում 3 409 գիտաշխատողներ կան, այդ թվում գիտությունների 79 դոկտոր, 734 գիտության թեկնածու, որոնք ստեղծագործաբարց աշխատում են և իրենց ավանդն են մուծում և՛ հայրենի և՛ համաշխարհային գիտության հետազա զարգացման գործում:

Մեծ աշխատանք է տարվում մաճավանդ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի գիտական հիմնարկներում աստրոֆիզիկայի, կողմիկական հառագայթների և տարրային մասնիկների, ուղինոֆիզիկայի, էլեկտրոնիկայի, էներգետիկայի, շրային հարցերի ուսումնասիրության բնագավառում:

Ժողովրդի բարեկեցության բարձրացմամբ և բուժսպասարկման բարեկավու-

րյամբ է բացատրվում այն ուսախալի փաստը, որ վերջին ժամանակներու Հայաստանում զգայինուն նվազել է բնակչության և հատկապես երեխաների մահացությունը: Միաժամանակ անշեղորեն շարունակում է անել նոր սերունդը. 1960 թվականին 1 000 բնակչի հաշվով անը կազմում էր 40,2 մարդ:

Այսօր բյուր երազներ են ծաղկում հայ ժողովրդի սրբություն:

Մեր օրերում է, որ հնարակուրույրյան տրվեց աշխարհով մեկ ցրված հազարամյա տարագիր հայության վերադարձու Մայր Հայրենիք: Ներգաղողով սկիզբ դրվեց Մայր Հայրենիքի հողին վրա ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՄԱՆԻ:

Ներգաղողները, Հայրենիքի եղբայրների և բույրերի հետ միասին, լծկեցին ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՍՐԲԱԶԱՆ ԳՈՒՇԻՆ:

1962 թվականին Հայրենիքը նորից կրանա իր թերեր հայրենակարու Սփյուտիքի հայության առաջ: Մեր Հայրենիքը, իրոք որ, «ՄԱԳՆԻՍԻ ՆՄԱՆ ԻՐԵՆ է ԶԳՈՒՄ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԼԱՎԱԳՈՒՅՅՆ ԳՈՒՄՏՐԵՄԻՆ ՈՒ ՈՐԻՒՆԵՐԻՆ»:

Ու կիերադառնան Հայրենիք Սփյուտիքի զանազան երկներից հազարամյա, տասնյակ հազարամյա հայրենակարաղ տարտիբներ իրենց քրահնիքի խանելու Մայր Հայրենիքի ժողովրդի շինարար և ստեղծագործ աշխատանքին:

«ՄԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ, — ասում է Ազգի Վեհաբառ Հայրապետ Հայաստանի քառասնամյակին նվիրված Խ հայրենաշնունշ խոսքի մեջ, ԲՈՂՈՐ ՀԱՅԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԱԶԳԱՅԻՆ ԽՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ նվ ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԵՆԴԱՆԻ ԱՂՋՅՈՒՐ ՄԸՆ է նվ ԳՐԱՎԱԿԱՆԸ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԲՈՂՈՐ ԱԶՆԻՎ ՀՈՒՅՅՈՒՐՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ: ԱՀՅ ԹԻ ԽՆՁՈՒ ՈՒՐԱԽ ԵՎ ՄԵՐ ՄԵՐ ՍՐՏԵՐԸ ԼԵՅ ՑՈՒԽԱՓԻԿ ԶԵՐՄՈՒԹՅԱՄԲ»:

ԱՅՍՈՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԻՐ ՀԱՅՐԵՆԻՆ ՀՈՂԻ ՎՐԱ, ՎԱՐԵԼ և ԻՐ ԳՈՅՈՒԹՅԱՆ, ՀԱՎԱԿԵՐԸՈՒԹՅԱՆ ԽԱՐՈՒՅՆԿԸ ԵՎ ՎԱՐ ՀԱՎԱՏՈՎ է ԽԱՅՈՒՄ ԱՎԵԼԻ ՊԱՅՄԱՆ ԳԱԼԻՔԻՆ:

Մաղկի՛ր, ազատ իմ Հայրենիք, ունացի՛ր մեծացի՛ր:

Փա՛ռ վերածնված հայ ժողովրդին: Փա՛ռ մեր սիրելի, մեր պաշտելի Մայր Հայրենիքին:

